h.1300990
31-10-2024թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԿԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2001, ՎԱՆԱՁՈՐ,*
ՏԵՐՅԱՆ Փ., 6, 19
karinesimonyan1@gmail.com : 37499616961

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

1. Լոռու մարզում գարնանային հեղեղումներից տուժած 269 ընտանիքներից քանի՞սն են արդեն օգտվել պետության աջակցությունից՝ տան վերանորոգման ծախսերի և գույքի փոխհատուցման տեսքով։

2. Որքան գումարի փոխհատուցում է արդեն տրվել։ Խնդրում եմ նշել՝ ըստ փոխհատուցման ուղղությունների։

3. Արդյո՞ք երկարացվել է փոխհատուցման համար դիմելու վերջնաժամկետն այն ընտանիքների համար, որոնց փաստաթղթերի հետ կապված հարցերը դեռ ընթացքի մեջ են։

4. Ալավերդու Սանահին կայարան թաղամասի վթարային համարված շենքի հարցով քննարկումներ էին ընթանում՝ բնակիչների դժգոհությունների հետ կապված։ Ի՞նչ լուծումներ են գտնվել։

5. Փոխհատուցման ո՞ր տարբերակն է համարվել վերջնական։

6. 16 ընտանիքներից քանի՞սն են համաձայնել փոխհատուցման առաջարկվող տարբերակին։

7. Ի՞նչ է լինելու այն ընտանիքների դեպքում, որոնք դիմումներ չեն գրել և չեն համաձայնել առաջարկվող տարբերակին։

6. Ինչպես լուծվեց Քարկոփի բնակելի շենքի ճակատագիրը։ ՏԿԵՆ նախարարի գյուղ կատարած այցի ժամանակ նշվել էր, որ նախկին խճի գործարանի սեփականությունը հանդիսացող շենքի բնակարանների սեփականացման հետ կածված գործընթաց կա։

Խնդրում եմ հարցերին պատասխանել հնարավորինս կարճ ժամկետում:

Հարգանքով՝

Ազատություն ռադիոկայանի լրագրող

Կարինե Սիմոնյան

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԿԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ